

# Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՎՈՐՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՀՄ 2011 թ. թիվ 13

### ԱՐՉՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԻԼՈՒՄ

Աշխատանքի միջազգային կազմակերպության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համագործակցությամբ 2011թ. մարտի 22-23-ը Ծաղկաձորում կազմակերպվեց “Արհմիությունները ժամանակակից փոփոխում” թեմայով երկօրյա սեմինար, որին մասնակցում էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կազմում ընդգրկված 24 ճյուղային միությունների նախագահները, ՀԱՄԿ-ի ղեկավարությունը և աշխատակազմի ստորաբաժանումների վարիչները: Սեմինարը անցկացնելու համար հանրապետություն էին ժամանել Սերգեուս Գլովացկասը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության Մոսկովյան գրասենյակի աշխատողների գործունեության ուղղությամբ գլխավոր մասնագետ, Մագնուս Բերգեն՝ ԱՄԿ-ի Ժնևի գրասենյակի աշխատողների գործունեության ուղղությամբ պատասխանատու աշխատող, և Վսեվոլոդ Բարբենեագրան՝ ԱՄԿ-ի փորձագետ, որն էլ վարում էր սեմինարը:

Սեմինարի ծրագիրը և անցկացման ոճը բոլորովին տարբերվում էին մինչ այժմ կազմակերպված սեմինարներից: Չկար դասախոս, աուդիտորիա, շաբլոն ձև, բոլորը մասնակցում էին քննարկումներին: Շատ գործնական և նպատակային էր ծրագիրը, որը բխում էր յուրաքանչյուր արհմիության գործչի առօրյա աշխատանքից:

Առաջին հարցը, որի շուրջ ծավալվեցին քննարկումները, “Արհմիությունների սահմանումը և նրա գործունեության սկզբունքներն” էր: Սեմինարին ավելի գործնական բնույթ տալու համար վերլուծության ենթարկվեցին արհմիութենական միասնության, համերաշ-

խության, ժողովրդավարության, անկախության խնդիրները:

Յուրաքանչյուր թեմա ավելի ընկալելի դարձնելու նպատակով մասնակիցները բաժանվում էին խմբերի, ամեն խմբին տրվում էր մեկ խնդիր, որը քննարկվում էր խմբում, ապա ներկայացվում բոլորին:

Նույն ձևով քննարկվեց նաև “Արհմիութենական գործունեության հիմնական ուղղությունները” թեման, որը իր մեջ ներառում էր աշխատանքային, իրավաբանական խնդիրներ, կազմակերպական խնդիրներ, արհմիութենական ուսուցում և “Արհմիությունների գործունեության միջավայրի (քաղաքական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական) վերլուծությունը” (վերջին 15-20 տարիների դինամիկան և հեռանկարը):

Բավականին հետաքրքրություն առաջացրեց “իդեալական” և իրական արհմիությունների համեմատությունը:

Քննարկվեցին նաև արհմիություններում փոփոխությունների օբյեկտիվ անհրաժեշտությունը և արտաքին գործոնների վրա ազդելու հնարավորությունը:

Յուրաքանչյուր թեմայի վերլուծությունից և քննարկումից հետո տեղի էր ունենում ամփոփում միջազգային փորձագետների միջոցով, որոնք ներկայացնում էին այլ երկրների և հատկապես ԽՍՀՄ նախկին հանրապետությունների փորձը, քանի որ դրանց գործունեությունները շատ նման են:

Ամփոփելով թեմայի քննարկումը՝ միջազգային փորձագետ Վսեվոլոդ Բարբենեագրան նշեց, որ արհմիությունների գործունեության հիմնական

ուղղությունները պետք է հանդիսանան.  
-Տեղական արհմիութենական կազմակերպությունների պատասխանատվության բարձրացում  
-Սոցիալ- տնտեսական խնդիրներ  
-Աշխատանքային խնդիրներ  
-Արհկոմների ուսուցում

-Ֆինանսական խնդիրներ  
-Իրավաբանական ուսուցում  
-Աշխատանք միջազգային կազմակերպությունների հետ  
-Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

### Ա Ր Հ Մ Ի ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ա Ռ Օ Ր Յ Ա Ն

- ✓ 2011 թվականի մարտի 18-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացավ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության Խորհրդի հերթական նիստը, որտեղ նաև քննարկվեց քաղծառայողների բազային աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանին դիմելու մասին հարցը:
- ✓ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ ՀԱՄԿ-ի նախագահը, նախագահության անդամները և աշխատակազմը այցելեցին Հաղթանակի զբոսայգի՝ հարգանքի տուրք մատուցելու Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին:
- ✓ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահը շնորհավորական ուղերձ հղեց Բելառուսի պետհիմնարկների արհմիության նախագահ Ս.Խոյլավոյին արհմիության ստեղծման 80-ամյակի կապակցությամբ:
- ✓ 2011 թվականի մայիսի 1-ին “Մոսկվա” կինոթատրոնում Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը Աշխատանքի օրվա կապակցությամբ ք.Երևանի արհմիության անդամների համար կազմակերպեց “Վանա ծովուն արշալույսը” ֆիլմի դիտումը:
- ✓ 2011 թվականի մայիսի 16-19-ը Բելառուսի Մինսկ քաղաքում կայացավ պետհիմնարկների աշխատողների արհմիության միջազգային ֆեդերացիայի Խորհրդի նիստը:
- ✓ 2011թ. մայիսի 29-ին “Արամ Խաչատրյան” համերգասրահում երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ ՃՀՄ-ի կողմից կազմակերպվեց միջոցառում ք. Երևանի արհմիության անդամների երեխաների համար:

### Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ապրիլի 28-ին նշվեց Աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրը՝ հռչակված Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից: Հայաստանում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է՝ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում ՀՀ պետական նորմատիվ-իրավական ակտերի, պետական չափորոշիչների, կանոնների, նորմերի մշակմանը և ընդունմանը; աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում՝ պետական ծրագրերի մշակմանը; անվտանգ տեխնոլոգիաների և տեխնիկայի մշակմանը և ներդրմանը; արտադրության մեջ դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների հաշվառման կարգի հաստատմանը; ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նպատակով պետական վերահսկողությանը; աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում՝ աշխատողների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությանն ուղղված ոչ պետական վերահսկողության իրականացման աջակցությանը; արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից տուժած աշխատողների և նրանց ընտանիքների օրինական շահերի պաշտպանությանը; փոխհատուցման սահմանում՝ ծանր աշխատանքի և աշխատանքի վնասակար կամ վտանգավոր պայմանների համար, եթե աշխատանքի կազմակերպման և արտադրության այժմյան մակարդակում դրանք անհնար է փոխել; աշխատանքի պաշտպանության և պայմանների բարելավման հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձի տարածմանը; արտադրական վնասվածքաբանության և մասնագիտական հիվանդությունների, նաև նրանց հետևանքների պետական վիճակագրական հաշվառման կազմակերպմանը; աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցությանը:

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական միությունը դիմում է ՀՀ կառավարություն՝ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը բարձրացնելու հարցով, սակայն հարցը մնում է չլուծված: Խնդրի լուծումը անհրաժեշտ ու անխուսափելի համարելով՝ ՃՀՄ նախագահը ՃՀՄ Խորհրդի որոշմամբ դարձյալ գրությամբ դիմեց ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանին: Ստորև ներկայացնում ենք ՃՀՄ նախագահ Ե. Հակոբովայի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից ի պատասխան ուղարկված գրությունները:

**ՀՀ վարչապետ  
պարոն Ս.Սարգսյանին**

Հարգելի պարոն վարչապետ,

Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2008-2010 թվականներին բազմիցս դիմել է Ձեզ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման հարցով: Սակայն տնտեսական ճգնաժամի պատճառով ՀՀ կառավարությունը քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացումը 2010 թվականի համար ևս իրատեսական չէր համարում, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի կարծիքով “տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող զարգացումների ծավալման պայմաններում հնարավոր չէր հստակ պատկեր կազմել առաջիկա տարիների զարգացումների արդյունքների մասին”: Մինչդեռ 2011 թվականի փետրվարի 26-ին ՁԼՄ-ների սված Ձեր հարցազրույցի ժամանակ հնչեցվեց, որ 2011 թվականին հանրապետությունում 2 անգամ ավելի տնտեսական աճ է սպասվում, քան 2010 թվականին:

Այս տարի հանրապետությունում ավելացել է նվազագույն աշխատավարձի չափը, բարձրացել է մշակույթի, կրթության, առողջապահության ոլորտների աշխատողների աշխատավարձը: Սակայն քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը շարունակում է մնալ 40000 դրամ:

Փաստորեն, առկա գնաճի պայմաններում չի ապահովվում քաղծառայողի և նրա ընտանիքի բավարար կենսամակարդակը, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 34 հոդվածի դրույթին:

Տեղեկացնում ենք, որ ստեղծված իրավիճակը լուրջ դժգոհություն է առաջացրել քաղծառայողների շրջանում: Այդ իսկ պատճառով ճյուղային հանրապետական միության խորհուրդը կրկին անգամ դիմում է Ձեզ՝ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման պահանջով:

Հուսով ենք, որ այս անգամ Կառավարությունը միջոցներ կհայթայթի նշված հարցի դրական լուծման համար:

Հարգանքով՝  
ՃՀՄ նախագահ

Ե.Հակոբովա

***Հայաստանի պետհիմնարկների, տեղական  
ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման  
աշխատողների արհեստակցական կազմակերպությունների  
ճյուղային հանրապետական միության նախագահ տիկին Ե.Հակոբովային***

Հարգելի տիկին Հակոբովա

ՀՀ վարչապետին ուղղված Ձեր գրությունը վերահասցեագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի կապակցությամբ հայտնում ենք.

պետական ծառայողների աշխատավարձի բարձրացումը, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը արդիական խնդիր է և որպես հանրային ծառայության որակի բարձրացման կարևոր պայման, ամրագրված է ՀՀ Կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ս որոշմամբ հաստատված ՀՀ Կառավարության գործունեության 2008-2012թ.թ. ծրագրում և ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի “Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին” N1207-Ն որոշման մեջ, սակայն ՀՀ տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված՝ 2009-2011թ.թ. աշխատավարձի բարձրացում չիրականացվեց: Ներկայումս բարձրացված հարցը քննարկվում է պետական հատվածի ծառայողների աշխատավարձերի կարգավորման համատեքստում:

Հարգանքով՝

Ա. Պետրոսյան

2011 թվականի սկզբից հանրապետության ողջ տարածքում աշխատանքներ են իրականացվում մինչև 16 տարեկան երեխաների գրանցումը բնակչության պետական ռեգիստրում կազմակերպելու համար Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինները ծանրաբեռնված էին աշխատում: Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունն ղիմել էին անձնագրային բաժինների մի շարք աշխատողներ, որոնք բողոքում էին իրենց սիստեմատիկաբար արտաժամյա աշխատանքի ներգրավելու կապակցությամբ: Ներկայացնում ենք ճյուղային միության նախագահի գրությունը՝ հասցեագրված ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետին և ի պատասխան ստացված գրությունը:

**Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ պարոն Ն.Մուրադխանյանին**

*Հարգելի պարոն Մուրադխանյան*

*Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը բողոքներ է ստանում անձնագրային ծառայությունների աշխատակիցներից սիստեմատիկաբար արտաժամյա աշխատանքի իրենց ներգրավելու մասին:*

*Տեղեկացնում ենք Ձեզ, որ արտաժամյա աշխատանքի ներգրավելու դեպքում, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական իրավունքները ու շահերը չտեսահարելու նպատակով Ձեզ անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի հոդ.145-ի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով, հոդ.146-ով, իսկ արտաժամյա աշխատանքի վարձատրությունը իրականացնել ըստ նույն օրենսգրքի հոդ.184-ի:*

*Խնդրում ենք Ձեզ վերոնշյալ իրադրության կարգավորման ուղղությամբ Ձեր կողմից ձեռնարկված միջոցների մասին տեղեկացնել ճյուղային միությանը:*

*Հարգանքով՝  
ՃՀՄ նախագահ*

*Ե.Հակոբովա*

Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ե.Հակոբովային

Հարգելի տիկին Հակոբովա

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հասցեագրված Ձեր 16.03.2011թ. թիվ 14-01 գրությունը քննարկվել է:

Քննարկման արդյունքներով հայտնում եմ, որ Ձեր գրությամբ ներկայացված խնդրի լուծման համար ՀՀ ոստիկանության իրավասու ստորաբաժանումների կողմից նախապատրաստվում է արտաժամյա աշխատանքի ժամանակի հաշվարկման համապատասխան կարգ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Պետ, ոստիկանության գնդապետ Ն.Մուրադխանյան

**Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2010 թվականին ՃՀՄ արհմիության անդամների թիվը կազմել է 16380, որից մոտ 10236-ը կին են, համաձայն ներկայացրած տվյալների, 2009 թվականի համեմատությամբ ՃՀՄ արհմիության անդամները նվազել են 365-ով:

Նվազել է նաև տարածքային միությունների անդամ կազմակերպությունների թիվը, մոտ 5 տարածքային միություններում՝ Արարատի, Մարտունու, Սիսիանի, Վայքի և Բերդի կազմակերպությունների թիվը նվազել է մեկով, Սպիտակի տարածքային միությունը կորցրել է 5 անդամ կազմակերպություն: Միայն մեկ տարածքային միություն, ըստ ներկայացրած տվյալների, Եղեգնաձորի տարածքային միությունը համալրվել է 4 անդամ կազմակերպությունով:

ՃՀՄ անդամ տեղական ինքնակառավարման մարմինների թիվը 461 է, որից 426-ը գյուղապետարաններն են: Տեղական ինքնակառավարման մարմիններում արհմիության անդամների թիվը 5474 է, որից գյուղապետարանների արհմիության անդամների թիվը կազմում է 4224: